"Railway construction directorate"
Closed Join-Stock Company

ԵՇS

"Дирекция железнодорожного строительства" Закрытое Акционер Общество

«Երկաթուղու շինարարության տնօրինություն»
Փակ բաժնետիրական ընկերություն

ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 28
հեռ.(+37410 54 21 46)

РА, 0010, г. Ереван, Налбандяна 28
тел.: (+37410 54 21 46)

RA, 0010, Yerevan, Nalbandyan 28
tel.: (+37410 54 21 46)

«16» 01 2015թ.

N 34-04.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով
ընթացակարգի շրջանակներում
գրանցված մասնակիցներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Երկաթուղու Շինարարության Տնօրինություն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԵՇՏ- ՇՀԱՊՁԲ-11/1-1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Երևան, Մ.Մկրտչյան 5բ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, 8-րդ հարկ 823,839 սենյակներ, մինչև 2015թ. հունվարի 30-ը ժամը 16:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Վ.Գրիգորյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Հայտերը կբացվեն ք.Երևան, Մ.Մկրտչյան 5բ հասցեով, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, 8-րդ հարկ, ''ԵՇՏ'' ՓԲԸ-ի 839 սենյակում 2015թ. հունվարի 30-ին, ժամը 16.00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲ ընկերության կարիքների համար՝ բենզինի /պրեմիում տեսակի/ ձեռքբերումը:

Ապրանքի մատակարարման պայմանները, տեխնիկական բնութագիրը և այլ պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը ներկայացված են պայմանագրի նախագծում /կից հավելվածներում/ և հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

- գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը /հավելված 5/, ընդ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային հասցեն,
- գնային առաջարկը /հավելված 6/: Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հայտ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԵՇՏ-ՇՀԱՊՁԲ-11/1-1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

''Երկաթուղու Շինարարության Տնօրինություն'' ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ **mtcesht@mail.ru:**

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը «Գնումների մասին» օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և (կամ) գնահատման համար պետք է Պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և (կամ) տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և /կամ տվյալները Պատվիրատուին ներկայացնում է ընտրված

մասնակիցը՝ մինչև ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168 որոշմամբ 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և (կամ) տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

-նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և տվյալները:

Առդիր՝ 11 /էջ/:

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ Ա.ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Հավելված 5
«ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
«ԵՇՏ- ՇՀԱՊՁԲ-11/1-1»
ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

ԴԻՄՈՒՄ

---------- ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակ ցիանվանումը(անունը)
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության <<Երկաթուղու շինարարության տնօրինություն>> ՓԲԸ-ի կողմից «ԵՇՏ-ՇՀԱՊՁԲ-11/1-1» ծածկագրով հայտարարված ընթացակարգի և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի մասնակցի անվանումը(անունը)
հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1. պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2. համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

---------- ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը/անունը/
գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

---------- ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը(անունը)

----------:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_____ _____
Մասնակցիանվանումը/անունը//ղեկավարիպաշտոնը,անուն,ազգանունը/ ստորագրություն

Կ.Տ

<—>----------2015թ.
Ամսաթիվը, ամիսը

Հավելված 6
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
«ԵՇՏ- ՇՀԱՊՁԲ-11/1-1» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գնային առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ԵՇՏ-ՇՀԱՊՁԲ-11/1-1» ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը,

----------ն առաջարկում է պայմանագիրը
Ընթացակարգիմասնակցիանվանումը

կատարել համաձայն հետևյալ գների՝

ՀՀ դրամ

Չափաբա ժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք *	ԱԱՀ **	Պայմանագրի կատարման համար առաջարկված ընդհանուր գինը (տառերով և թվերով)
1	2	3	4	5=3+4
1				
2				
3				
....				

***3-րդ սյունակում նշված <<Արժեքը>>ներառում է ինքնարժեքը և շահույթը:**

***Եթե մասնակիցն ԱԱՀ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշում է 4-րդ սյունակում:**

Մասնակցի անվանումը/անունը/ ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանունը

ստորագրություն

Կ.Տ

<--->----------2015թ.
Ամսաթիվը, ամիսը

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵՇՏ-ՇՀԱՊՁԲ-11/1-1

Քաղ. Երևան «____» _____ 2015.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Երկաթուղու Շինարարության Տնօրինություն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «ԵՇՏ» ՓԲԸ), ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Շահնազարյանի, ով գործում է «ԵՇՏ» ՓԲԸ –ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և « » - ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, (Գնորդին և Վաճառողին միասին հիշատակման դեպքում, այսուհետ՝ «Կողմեր») կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված բենզին (այսուհետ՝ «Ապրանք»), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

1.2. Վաճառողը Ապրանքը մատակարարում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով ու ժամկետներում, և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Գնորդն իրավունք ունի՝

2.1.1. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 3-րդ կետի պահանջներին և սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն, իր հայեցողությամբ սահմանելով ողջամիտ ժամկետ, անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման համար, և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 6.3. կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև սույն պայմանագրի 6.2. կետով նախատեսված տույժը.

գ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

2.1.2. Եթե հանձնվել է սույն պայմանագրով սահմանվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու համապատասխան Ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը.

2.1.3. Եթե հանձնվել է գնորդի կողմից նշված տեսակին՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին, չհամապատասխանող Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքից.

բ) հրաժարվել հանձնված ամբողջ Ապրանքից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 6.3. կետով նախատեսված տուգանքը.

գ) պահանջել ողջամիտ ժամկետում փոխարինել հանձնված Ապրանքը նշված տեսակին համապատասխանող Ապրանքով և պահանջել Վաճառողից վճարելու սույն

պայմանագրի 6.3. կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև սույն պայմանագրի 6.2. կետով նախատեսված տույժը.

2.1.4. Եթե Վաճառողի կողմից խախտվել են մատակարարման ժամկետները՝

ա) իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 6.2. կետով նախատեսված տույժը.

բ) միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

2.1.5. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

2.1.5.1. Վաճառողի կողմից սույն պայմանագրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

2.1.6. Հրաժարվել հանձնված Ապրանքից, միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը, եթե ապրանքի համար վճարվել է, իսկ Գնորդը հրաժարվում է Վաճառողին հանձնել Ապրանքի պատկանելիքները, համապատասխան փաստաթղթերը և սույն պայմանագրի 2.4.1. կետով սահմանված համապատասխան Ապրանքը:

2.1.7. Վաճառողից պահանջել հատուցել վնասները, եթե Պատվիրատուն Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքած գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ծախսերը:

2.2. Գնորդը պարտավոր է՝

2.2.1. Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները.

2.2.2. Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

2.2.3. Հանձնված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի էական խախտման դեպքում՝ սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը.

2.2.4. Ապրանքի քանակի, տեսակի, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.3. Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1. Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով մատակարարված Ապրանքը.

2.3.2. Գնորդից պահանջել վճարելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում հանձնված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

2.3.3. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Գնորդն էականորեն խախտել է սույն պայմանագիրը:

2.3.3.1. Գնորդի կողմից սույն պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

2.4. Վաճառողը պարտավոր է՝

2.4.1. Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան Ապրանք:

2.4.2. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

2.4.3. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 6.2. և 6.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը.

2.4.4. Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը.

2.4.5. Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր.

2.4.6. Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 2.2.2. կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7. Գնորդին ներկայացնել Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը:

2.4.8. Սույն Պայմանագրի 2.1.5 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

2.4.9. Սույն պայմանագրի կատարման /կանխավճարի/ ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. Ապրանքի որակը

3.1. Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը սահմանված նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ----------/ ՀՀ դրամ՝ ներառյալ բոլոր հարկերը և պարտադիր այլ վճարները: Յուրաքանչյուր միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցով: Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող /կանխավճարի մարվող/ գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2. Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության/հավելված4/ հիման վրա՝ վճարման ժամանակացույցով/հավելված3/ նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/, բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով, տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. Ապրանքի հանձնումը և ընդունումը

5.1. Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ սույն պայմանագրի N 4 հավելվածով սահմանված օրինակելի ձևով:

5.2. Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.3. Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2. Վաճառողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման դեպքում Վաճառողից գանձվում է տույժ՝ սույն պայմանագրի գնի 0.05%-ի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.3. Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի ընդհանուր գնի 0.5%-ի չափով

6.4. Սույն պայմանագրի 6.2. և 6.3. կետով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

6.5. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05%-ի չափով:

6.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և/կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու սույն պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.4. Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, սույն պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի համաձայնագիր:

8.5.Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները և/կամ վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Գնորդի հետ պայմանագիր կնքած անձը:

8.6.Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.7.Սույն պայմանագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.8.Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից և 4 էջ հավելվածները /9 էջ/, հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3 և N4 հավելվածները սույն պայմանագրի անբաժանելի մասն են:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«ԳՆՈՐԴ»	«ՎԱՃԱՌՈՂ»
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
2015թ. կնքված
ԵՇՏ -*ՇՀԱՊՁԲ-11/1-1* պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ-ի կարիքների համար վառելիքի ձեռքբերման

հ/հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	չ/մ	Մատակարարում
1	Բենզին պրեմիում	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 95, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 85, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1% -ից ոչ ավելի, խտությունը՝ 15 0 C ջերմաստիճանում՝ 720-775 կգ/մ3, ծծմբի պարունակությունը 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը 2,7%-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3%, էթանոլ-5%, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10%, եռաբութիլ սպիրտ-7%, եթերներ (C5 և ավելի)-15%, այլ օքսիդիչներ-10%, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»:	լիտր	Կտրոնային

Գնորդ **Վաճառող**

«ԵՇՏ» ՓԲԸ

_____ _____

_____ _____

ստորագրություն Կ.Տ ստորագրություն Կ.Տ

Հավելված 2
----------2015թ. կնքված
«ԵՇՏ- ՇՀԱՊՁԲ-11/1-1»
պայմանագրի

Գնման ժամանակացույց

«Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ-ի կարիքների համար ձեռք բերվող վառելիքի /պրեմիում բենզին/:

հ/հ	Գնման առարկան	Չափման միավոր	Միավորի գին ՀՀ դրամ	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում				Ընդհանուր	
				1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	քանակ	Գումար (ՀՀ դրամ)
1	Պրեմիում բենզին	լիտր		775	775	775	775	3100	

«ԳՆՈՐԴ»

ստորագրություն

Կ.Տ

«ՎԱՃԱՌՈՂ»

ստորագրություն

Կ.Տ

Հավելված 3
« » _____2015թ.կնքված
«ԵՇՏ-ՇՀԱՊՁԲ-11/1-1»
պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. ըստ ամիսների՝ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Պրեմիում բենզին	-	25 %	25 %	50 %	50 %	50 %	75 %	75 %	75 %	100 %	100 %	100 %	100 %

ԳՆՈՐԴ

«ԵՇՏ» ՓԲԸ

_____

_____

ստորագրություն Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

_____

_____

ստորագրություն Կ.Տ.

Հավելված 4
< ---> ----------2015թ. կնքված
«ԵՇՏ-ՇՀԱՊՁԲ-11/1-1»
պայմանագրի

Գնորդ

Վաճառող

ՀՎՀՀ
Հ/Հ

ՀՎՀՀ
Հ/Հ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

"__" "_____" 2015 թ.

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ "__" "_____" 2015 թ.
Պայմանագրի համարը՝ _
Գնորդն, ի դեմս ''Երկաթուղու շինարարության տնօրինություն'' ՓԲԸ-ի ---------- և Վաճառողն՝ ի դեմս '' '' -ի ----------, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները /այսուհետև՝ Մատակարարում/ համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը "__" "_____" 2015 թ-ից "__" "_____" 2015թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարա-րումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ ժամանակացույցի/
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
/ստորագրություն/

ազգանուն
Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

_____
/ստորագրություն/

ազգանուն
Կ.Տ.